ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/128

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից 20.12.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 20.12.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Գործի հակիրճ նկարագրությունը և վեճի առարկան.

Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի կարիքների համար՝ աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Սույն ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված 2018թ. դեկտեմբերի 21-ը, ժամը 10:00-ն:

Ընթացակարգի առարկա է հանդիսանում «ԵՊԼՀ» հիմնադրամի կարիքների համար՝ «Աուդիտորական ծառայության» ձեռքբերումը (այսուհետ նաև՝ ծառայություն), որոնք խմբավորված են «1» չափաբաժնում:

Ընթացակարգի հրավերի «ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ» վերտառությամբ 2-րդ բաժնի 2.5 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները

Մասնագետների աշխատանքային փորձը		
որակավորումը	ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը
Միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների կողմից որակավորված առնվազն 3 աուդիտորներ:	Վերջին 5 տարվա մեջ նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձ նշված որակավորմամբ և 5 տարվա փորձ՝ ՖՀՄՍ-ների կիրառման ոլորտում : Մասնակից կազմակերպության կազմում աշխատանքային փորձը նվազագույնը 5 տարի:	Կրթական ոլորտում աուդիտորական ծառայությունների մատուցման առնվազն 5 տարվա փորձ: Կրթական ոլորտում աուդիտորական ծառայությունների մատուցման առնվազն 5 պայմանագրերում ներգրավվածություն Միջազգային դրամաշնորհային պայմանագրերի իրականացման աուդիտի փորձ

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

գ. եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները: Առաջադրվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները ներկայացվում են հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	Որակավորումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը
		ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1.				
2.				

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Համաձայն Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի», սահմանվել է հետևյալը՝

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր. Համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ:

Աուդիտի պետք է ենթարկվի ՖՀՄՍ-ների համապատասխան պատրաստված Պատվիրատուի տարեկան համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբեր 2018 թվական, այդ ամսաթվին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին էական տեղեկատվությունը և այլ բացատրական ծանոթագրություններ:

Պատվիրատուի եկամուտները 2018 թվականի ընթացքում կազմում է մոտ 1,3 մլրդ ՀՀ դրամ:

Անցկացված աուդիտի արդյունքում աուդիտ իրականացնող անձը պետք է արտահայտի կարծիք առ 31-ը դեկտեմբեր 2018 թվականի և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, ինչպես նաև հաստատի www.Azdarar.am կայքում հրապարակվող տեղեկությունները՝ Պատվիրատուի ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և

վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 64-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝

ա. հրավերով պահանջվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնի պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	որակավո-րումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը
		ժամանա-կահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1.				
2.				
..				

բ. աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

Գտնում ենք, որ «ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից սույն ընթացակարգի հրավերը կազմելիս՝ թույլ է տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի, ինչպես նաև Կարգի 64-րդ կետի պահանջների խախտում, մասնավորապես.

«Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշով սահմանվել է, որ պայմանագրի կատարման համար պահանջվում են միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների կողմից որակավորված առնվազն 3 աուդիտորներ, որոնք ունեն վերջին 5 տարվա մեջ նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձ նշված որակավորմամբ և 5 տարվա փորձ՝ ՖՀՄՍ-ների կիրառման ոլորտում, իսկ որպես գործունեության ոլորտը և կատարված աշխատանքները պահանջվել է հետևյալը. կրթական ոլորտում աուդիտորական ծառայությունների մատուցման առնվազն 5 տարվա փորձ: Կրթական ոլորտում աուդիտորական ծառայությունների մատուցման առնվազն 5 պայմանագրերում ներգրավվածություն: Միջազգային դրամաշնորհային պայմանագրերի իրականացման աուդիտի փորձ:

Այսպես.

1.Բացարձակ սուբյեկտիվ է Ընթացակարգի հրավերով ամրագրված հետևյալ արտահայ-տությունը՝ «Միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական

կազմակերպությունների կողմից որակավորված առնվազն 3 աուդիտորներ», քանզի նման ձևակերպման պայմաններում ցանկացած միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների կողմից որակավորված աուդիտորները կարող են չընդունվել պատվիրատուի կողմից՝ նման լղոզված և ոչ հստակ ձևակերպման պայմաններում, քանզի չկա պատվիրատուի համար ընդունելի միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների ցանկ, որով ղեկավարվելով՝ ծառայություն մատուցողը կարող է առաջնորդվել:

2.Բացի այդ, ցանկանում ենք ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի ծառայությունների մատուցման համար պահանջվում է աուդիտորական գործունեության իրականացման լիցենզիա և տվյալ պարագայում Ընթացակարգի հրավերի այն պահանջը, որ աուդիտորները պետք է ունեն ան վերջին 5 տարվա մեջ նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձ նշված որակավորմամբ և 5 տարվա փորձ՝ ՖՀՄՍ-ների կիրառման ոլորտում, գտնում ենք, որ օբյեկտիվորեն հիմնավորված չէ և համարժեք չէ այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ 2017թ. և 2018թ. «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի կարիքների համար՝ աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգերի հրավերների շրջանակներում նման խտրական պահանջներ սահմանված չեն եղել:

Նման փաստական հանգամանքների պայմաններում գտնում ենք, որ Հրավերի «ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ» վերտառությամբ 2-րդ բաժնի 2.5 կետի 4-րդ ենթակետը, ինչպես նաև «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը» պետք է վերանայվեն և համապատասխանեցվեն գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

Օրենքի 29-րդ հոդվածը նախատեսում է հրավերում փոփոխություններ կատարելու հնարավորությունը:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Հաշվի առնելով, որ Ընթացակարգով հայտերի ներկայացման ժամկետը դեռևս ավարտված չէ, ուստի ղեկավարվելով Օրենքի ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության պահանջներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ պարտավորեցնել «ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

2. <u>«Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից 20.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 24.12.2018թ. էլ. փոստով ներկայացրել է դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման հրավերի Հավելված 1-ը՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը», կազմված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի պահանջներին համապատասխան:

«Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով ներկայացրած պահանջները ևս չեն հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքին»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/128 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից 20.12.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի դիրքորոշումը.

«Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի կարիքների համար աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի 1.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնման առարկա է հանդիսանում «ԵՊԼՀ» հիմնադրամի կարիքների համար՝ «Աուդիտորական ծառայության» ձեռքբերումը:

Նույն հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար պահանջվել է աուդիտորական գործունեության իրականացման լիցենզիա:

Հրավերի 2-րդ բաժնի 2.5 կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ Մասնակցին ներկայացվող՝ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով.

Մասնագետների աշխատանքային փորձը՝

• Որակավորումը՝ Միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների կողմից որակավորված առնվազն 3 աուդիտորներ:

• Ժամանակահատվածը՝ Վերջին 5 տարվա մեջ նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձ նշված որակավորմամբ և 5 տարվա փորձ՝ ՖՀՄՍ-ների կիրառման ոլորտում : Մասնակից կազմակերպության կազմում աշխատանքային փորձը նվազագույնը 5 տարի:

• Գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը՝ Կրթական ոլորտում աուդիտորական ծառայությունների մատուցման առնվազն 5 տարվա փորձ:

Կրթական ոլորտում աուդիտորական ծառայությունների մատուցման առնվազն 5 պայմանագրերում ներգրավվածություն:

Միջազգային դրամաշնորհային պայմանագրերի իրականացման աուդիտի փորձ:

Նույն ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ բողոքաբերը պնդեց Բողոքի քննության շրջանակներում հայտնած գրավոր դիրքորոշումն ամբողջությամբ: «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնեց, որ Ընթացակարգի Հրավերով նախատեսված՝ մասնակցին ներկայացվող՝ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով Պատվիրատուի կողմից սահմանվել են այնպիսի տվյալներ և պայմաններ, որոնք չեն բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից, կրում են սուբյեկտիվ բնույթ, խտրական են և էականորեն սահմանափակում են հնարավոր մասնակիցների մասնակցությունը գնման գործընթացին: Մասնավորապես, Բողոքաբերն անդրադարձավ Հրավերի «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով Պատվիրատուի կողմից սահմանված հետևյալ պահանջներին.

1. Որակավորումը. «Միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների կողմից որակավորված առնվազն 3 աուդիտորներ»: Ըստ բողոքաբերի, աշխատանքային ռեսուրսներին վերաբերող պահանջի նման ձևակերպումը բացարձակ սուբյեկտիվ է և ոչ հստակ, քանի որ Հրավերով նախատեսված չէ պատվիրատուի համար ընդունելի միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների ցանկ, որոնց կողմից որակավորում ստացած աուդիտորը կհամարվի վերը նշված պահանջին համապատասխանող:

2. Ժամանակահատվածը. «Վերջին 5 տարվա մեջ նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձ նշված որակավորմամբ և 5 տարվա փորձ՝ ՖՀՄՍ-ների կիրառման ոլորտում: Մասնակից կազմակերպության կազմում աշխատանքային փորձը նվազագույնը 5 տարի»: Ընկերությունը գտնում է, որ մասնակցի հիմնական աշխատակազմում ներառված մասնագետի աշխատանքային փորձի պահանջվող ժամանակահատվածի նման սահմանումը ևս սուբյեկտիվ է և չհիմնավորված, կրում է կամայական բնույթ և կարող է սահմանափակել հնարավոր մասնակիցների մասնակցությունը գնման գործընթացին:

3. Գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը. «Կրթական ոլորտում աուդիտորական ծառայությունների մատուցման առնվազն 5 տարվա փորձ և առնվազն 5 պայմանագրերում ներգրավվածություն: Միջազգային դրամաշնորհային պայմանագրերի իրականացման աուդիտի փորձ»: Ըստ բողոքաբերի, ՀՀ օրենսդրությամբ աուդիտորական ծառայությունների մատուցումը հանդիսանում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ, որով զբաղվելու իրավունք ունեցող անձինք օժտված են աուդիտորական գործունեության մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված որակավորման համապատասխան հատկանիշներով, և ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնելիս պարտավոր են կիրառել ՀՀ օրենսդրությամբ սահմանված աուդիտի միասնական ստանդարտները՝ անկախ այն հանգամանքից, թե հատկապես որ ոլորտում է իրականացվում ֆինանսական աուդիտը՝ կրթական, մշակութային, առողջապահական, կամ ցանկացած այլ: Հետևաբար, աուդիտորական ծառայություններ մատուցող մասնագետի գործունեության ոլորտի նմանօրինակ մասնավորեցումն, ինչպես նաև միջազգային դրամաշնորհային պայմանագրերի աուդիտի փորձ ունենալու պահանջը ըստ բողոքաբերի ևս հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, համաչափ և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքին, և չի նպաստում գնման գործընթացի հնարավոր մասնակիցների շրջանակի ընդլայնմանը:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աուդիտորական ծառայությունների իրականացումը հանդիսանում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ աշխատանքային ռեսուրսներ:

- 4-րդ մասի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)՝

- 21-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝ (...) խորհրդատվական ծառայությունների գնումների, ինչպես նաև այն գնումների դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման նպատակով պահանջվում են համապատասխան աշխատանքային ռեսուրսներ, «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը: Աշխատակազմի նվազագույն քանակին, պահանջվող որակավորմանը, աշխատանքային փորձին (տարիների նվազագույն քանակը, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը) ներկայացվող պահանջները սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

- 21-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ (...)պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման համար պահանջող լիցենզիաների տեսակները, եթե կնքվելիք պայմանագրի կատարումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հանդիսանում է լիցենզավորման ենթակա գործունեություն:

- 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

- 64-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝

ա. հրավերով պահանջվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնի պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	որակավո-րումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը
		ժամանա-կահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1.				
2.				
..				

բ. աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնման առարկա է հանդիսանում «ԵՊԼՀ» հիմնադրամի կարիքների համար՝ «Աուդիտորական ծառայության» ձեռքբերումը:

- Հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար պահանջվել է աուդիտորական գործունեության իրականացման լիցենզիա:

- Գնման գործընթացը կազմակերպվել է՝ մասնակիցներին առաջադրելով միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների կողմից որակավորման առկայության չափանիշներ, վերջին 5 տարվա մեջ նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձ նշված որակավորմամբ և 5 տարվա՝ ՖՀՄՄ-ների կիրառման ոլորտում աշխատանքային փորձի, կրթական ոլորտում աուդիտորական ծառայությունների մատուցման առնվազն 5 տարվա փորձի և առնվազն 5 պայմանագրերում ներգրավվածության, ինչպես նաև միջազգային դրամաշնորհային պայմանագրերի իրականացման աուդիտի փորձի առկայության չափանիշներ:

- Պատվիրատուի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց այն մասին, որ տվյալ դեպքում հրավերով սահմանված՝ մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված չափանիշները խտրական չեն և չեն սահմանափակում մրցակցությունն, անհիմն կերպով չեն բարդացնում հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին, համարժեք են և ուղղակիորեն բխում են պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Ելնելով վերը նշված փաստական հանգամանքների և իրավական կարգավորումների վերլուծությունից՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հրավերով սահմանված «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշին բավարարելու նպատակով առաջադրված պահանջները հիմնավորված չեն և չեն բխում Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 6-րդ հոդվածի 4-րդ մասի, Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության և 22-րդ կետի պահանջներից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից 20.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ